



ՓՐՈԹՈՔՈՒԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇԱՐՔԵՐԷՆ ՆԵՐՄ

Ընդհանրապես կեանքի եւ յատկապես միութենական կեանքի յաջողութեան կարեւորագոյն գրաւականներէն մէկն է փոխ-յարաբերութիւնները, կարգն ու ձեւը, այսինքն՝ փրոթոքովը, որոնք ճիշդ ձեւով իրագործուելու պարագային հաճելի մթնոլորտ կը ստեղծեն, դիրացնելով փոխադարձ հասկացողութիւնը:

Այս գրութեամբ ներկայացուած փրոթոքովային ցուցմունքները կը թելադրուին Հ.Մ.Ը.Մ.էն ներս օրըստօրէ աճելու հակամէտ միութենական եւ ազգային կարգերը խախտող երեւոյթները կանխելու պահանջէն, ինչպէս նաեւ՝ մեր կենցաղավարութեան մէջ ամբողջական կարգապահութիւն հաստատելու կարեւորութիւնը շեշտելու մտահոգութենէն:

Ի՞նչ կը նշանակէ Փրոթոքով եւ այդ իմաստով ի՞նչ կը սպասուի մեզմէ:

1. ՅԱՐԳԱՆՔ

Յարգանքը խիստ կարեւոր է միութենական կեանքին մէջ: Ժողովներու, ձեռնարկներու թէ միութենական այլ հանդիպումներու առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն մարմին Կեդրոնական Վարչութենէն սկսեալ, նուիրապետական կարգով, գերադաս դիրքի վրայ գտնուող բոլոր վարչութիւնները եւ յանձնախումբերը իրեն հանգամանքին համապատասխան յարգալիք վերաբերումի պէտք է արժանանա՝ ստորադաս դիրքերու վրայ գտնուող բոլոր վարչութիւններու, յանձնախումբերու եւ անհատ միութենականներու կողմէ:

Յարգանք պէտք է ցոյց տալ բոլոր հիւրերուն, հովանաւորներուն, նուիրատուներուն, համակիրներուն եւ իրարու հանդէպ:

2. ԾԱՆՕԹԱՑՈՒՄ ԲԱՐԵԻՅԷԼ

Երբ անձանօթներու կը հանդիպինք մեր աշխատանքներու ընթացքին, պէտք է երկուստեք ծանօթացում տեղի ունենայ: Իսկ երբ հիւր մը միացած է մեզի, ան պէտք է պատշաճ ձեւով ներկայացուի ներկաներուն:

Բարեւելը տարրական երեւոյթ մըն է մեր կեանքին մէջ: Բարեւելը համեստութիւն է: Երբ իրար բարեւ կու տանք, կը նշանակէ իրարու կարեւորութիւն կու տանք, սեր ու յարգանք կը ցուցաբերենք:

3. ՄԱՍՆԱԿԻԻՂԵՐՈՒ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ – ԽՈՂՈՎԱԿՆԵՐ

- Շրջանային Վարչությունը, մասնաճիւղերու հետ իր յարաբերութիւնները հեզասահ կատարելու հեռանկարով, մասնաճիւղերու մօտ կը նշանակէ իր ներկայացուցիչները, որոնք մօտէն կը հետեւին իրենց վստահուած մասնաճիւղերու գործունէութեանց, կը պատասխանեն անոնց հարցերուն եւ օգտակար կը հանդիսանան մասնաճիւղային լուրջ հարցերուն:
- Այս ներկայացուցիչներու պաշտօնական կապը մասնաճիւղի ատենապետն է:
- Մասնաճիւղի կապը Շրջանային Վարչութեան հետ մասնաճիւղի ատենապետն է: Բացի այն պարագայէն, երբ Շրջանային Վարչությունը իր յանձնախումբերու համար վարչական ներկայացուցիչներ խնդրէ:
- Պաշտօնական հրաւերները, պաշտօններու վաւերացումները, արտօնութիւնները եւ այլ կարեւոր նախաձեռնութիւնները պէտք է պաշտօնական նամակով կատարուին:
- Շրջանային եւ մասնաճիւղային գրասենեակները կը ներկայացնեն իրենց համապատասխան մարմինները: Շրջանային գրասենեակը՝ Շրջանային Վարչութիւն, իսկ Մասնաճիւղինը՝ Մասնաճիւղի Վարչութիւն:
- Մասնաճիւղերու եւ Հ.Մ.Ը.Մ.ի այլ շրջաններու Շրջանային վարչութեանց յարաբերութիւնները պէտք է կատարուին օրինաւոր կերպով՝ մի՛ այն Շրջանային Վարչութեան միջոցաւ:
- Մասնաճիւղերու յարաբերութիւնը Ազգային Առաջնորդարանի կամ այլ կազմակերպութիւններու Շրջանային Վարչութիւններուն (օրինակ՝ Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութիւն) հետ պէտք է կատարուին օրինաւոր կերպով՝ մի՛ այն Շրջանային Վարչութեան միջոցաւ:

4. ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՓՐՈԹՈՔՈՒ

4.1 Ներկայացման Կարգ

Յաճախ ձեռնարկներու ընթացքին պաշտօնական հիւրերու ներկայացումը հետեւեալ յաջորդականութեամբ պէտք է կատարուի.-

1. Հոգեւորականներ (Առաջնորդ, Քահանայ,...)
2. Պետական Ներկայացուցիչներ (Քոնկրէտականներ, Ծերակուտականներ,...)
3. Համահայկական Պատկան Մարմիններ (Դեսպան, Հիւպատոս, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ...)
4. Տեղական Պետական Անձնաւորութիւններ (Քաղաքապետ,...)
5. Կեդրոնական Վարչութիւններ (Հ.Յ.Դ.ի Կեդրոնական Կոմիտէ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,...)

6. Շրջանային Վարչություններ (Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչություն, Համազգայինի Շրջանային Վարչություն,...)
7. Կազմակերպություններ (Հ.Օ.Մ., Համազգային,...)
8. Մասնաճիւղեր
9. Հիւրեր
10. Հովանավորներ, Նուիրատուներ եւ Համակիրներ
11. Անդամներ

4.2 Նստելու Կարգ

Երբ ձեռնարկի մը ներկայ կը գտնուի երկրի մը նախագահը կամ ազգի մը Վեհափառ Հայրապետը, ան պէտք է առանձնացուի բոլորէն եւ սրահի մէջտեղը առանձին աթոռի վրայ նստի, կողքին կամ ետին իր թիկնապահը (նախագահ) կամ գաւազանակիրը (Կաթողիկոս) ունենայ:

Յաջորդ շարքին կեդրոնը կը նստի Թեմի առաջնորդը:

Առաջնորդի աջին ու ձախին ու այնուհետեւ կը նստին վերը նշուած յաջորդականութեամբ պաշտօնական հիւրերը (Հոգեւորականներ, Պետական Ներկայացուցիչներ, Համահայկական Պատկան Մարմիններ եւ Տեղական Պետական Անձնավորութիւններ, Կեդրոնական Վարչութիւններ, Շրջանային Վարչութիւններ, Կազմակերպութիւններ, Մասնաճիւղեր, Հիւրեր, Հովանավորներ, Նուիրատուներ, Համակիրներ եւ Անդամներ):

4.3.1 Շրջանի Ներքին եւ Այլ Ձեռնարկներ

Շրջանի ներքին ձեռնարկներուն, Շրջանային Վարչութեան ատենապետը կամ ատենապետի փոխարէն անոր ներկայացուցիչը պէտք է նստի ձեռնարկին գլխաւոր սեղանը: Իսկ պաշտօնական նկարներու պարագային, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը պէտք է ըլլայ նկարուողներուն կեդրոնը նստած կամ կանգնած:

4.3.2 Շրջանային Վարչութեան Ներկայացուցիչ

Երբ Շրջանային Վարչութեան անդամ մը կը գտնուի իր մասնաճիւղի ձեռնարկին, նոյն յարգանքը պէտք է ցուցաբերուի անոր, ինչպէս Շրջանային Վարչութեան անդամ եւ ոչ Մասնաճիւղի անդամ:

4.4 Հանդիսութեան Մը Յայտագիրը

Հանդիսութեան մը յայտագիրը պէտք է կարճ, հետաքրքրական եւ գրաւիչ ըլլայ:

4.4.1 Յատագիրի կարգ.

- Դրօշակի արարողութիւն, Ամերիկայի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներ
- Հանդիսավարի բացման խօսք
- Օրուան պատգամախօս
- Շրջանային Վարչութեան պատգամ
- Կեդրոնական Վարչութեան պատգամ

- Հոգեւորականի օրհնութիւններ (Հոգեւորականի օրհնութիւնները կը փոխանցուին մէկ անգամ, յայտագրի սկիզբը՝ հանդիսավարի բացման խօսքէն ետք, կամ աւարտին)
- Փակման խօսք (Փակման խօսքէն ետք կարելի չէ ուրիշ մէկու մը խօսք տալ)


4.4.2 Եթէ ձեռնարկի ընթացքին պիտի գործադրուի գեղարուեստական յայտագիր (երգ, պար, արտասանութիւն, նուագ եւ այլն), կատարողները իրենց ելոյթները պէտք է ունենան խօսք առնողներուն միջեւ, որպէսզի ձեռնարկը ձանձրանալի չըլլայ: Նոյնն է պարագան նաեւ տեսաերիզի ցուցադրութեան:

4.5 Հ.Մ.Ը.Մ.ի Դրօշը

- Դրօշակները պէտք է զետեղուին բեմին վրայ կամ ձեռնարկի ելոյթ ունեցողներու ետին:

- Դրօշներու զետեղումը պէտք է ըլլայ հետեւեալ կարգով, հանդիսատեսի ձախ կողմէն սկսեալ.-

- Ամերիկեան դրօշ
- Հայաստանի դրօշ
- Արցախի դրօշ
- Քալիֆորնիոյ դրօշ
- Հ.Մ.Ը.Մ.ի
- այլ կազմակերպութեան դրօշ



Մահացող

Ուել մահացող Հ.Մ.Ը.Մ.ական արժանի է Հ.Մ.Ը.Մ.ի դրօշով թաղուիլ ընտանիքին համաձայնութեամբ:

Եզրակացութիւն

Վերեւ յիշուած փոխ-յարաբերութիւնները, կարգն ու ձեւը, այսինքն՝ փրոթոքօրը ճիշդ եւ անթերի ձեւով գործադրման պարագային, կը վստահեցնենք ձեզ, թէ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր աշխատանքները հեզասահ եւ արդիւնաւէտ կ'ընթանան նոր վերելք մը ապահովելով մեր միութեան: